ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-21/1

«13» մարտ 2021թ.

ք. Երևան

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Վ. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և "Մ-Բի-Ռ" ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Բաղդասարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից (այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների պահպանման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 1700000 (մեկ միլիոն յոթ հարյուր հազար) << դրամ, որից 1200000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) << դրամը առկա ֆինանսական միջոցներով:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և << օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է << դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում

վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ֆինանսների նախարարություն	"Մ-Բի-Ռ" ՍՊԸ
ք. Երևան, Մ. Ադամյան 1	ՀՀ, ք. Երևան, Մյասնիկյան 22/4
ՀՎՀՀ՝ 02629081	Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ ՓԲԸ
Հ/Հ 900011018539	"Գեղարքունիք" մ/ճ
ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ 220083335012000
ՖՆ գլխավոր քարտուղար	ՀՎՀՀ 08417829
_____Վ. Հարությունյան	Տնօրեն՝ _____ Վ. Բաղդասարյան
/ստորագրություն/	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«23» մայիս 2021թ. կնքված
«ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

		Ծառայության					
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	առավելագույն գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցե	մատուցման ժամկետը
1	50111170/1	Տոյոտա Պրադո 4.0լ., Տոյոտա Քեմրի 3.5լ., Տոյոտա Քեմրի 2.5լ. մակնիշների ավտոմեքենաների համար տեխնիկական սպասարկում , համաձայն կից ներկայացվող ցանկերի** (առավելագույնը թվով 4 ավտոմեքենա): 1. Կատարողը պարտավոր է Պատվիրատուի պահանջով տրամադրել տեղեկանք՝ Պատվիրատուի տրանսպորտային միջոցը Կատարողի տեխսպասարկման կայան ներկայացնելու օրվա, ժամի և կատարված աշխատանքների մասին, 2. Կատարողը պարտավոր է SU-2 ի ժամանակ օգտագործել տվյալ ավտոմեքենայի արտադրող ընկերության կողմից արտադրված կամ նրա երաշխավորված այլ արտադրության պահեստամասեր և քսայուղեր՝ ինչպես նաև Պատվիրատուի պահանջով տրամադրել դրանց ձեռքբերումը կամ ներմուծումը հավաստող փաստաթղթի պատճենը, 3. Տեխսպասարկման կայանը պետք է հագեցած լինի առնվազն 2 ամբարձիչներով՝նվազագույնը երեք տոննա բարձրացնելու կարողությամբ, 4. Պետք է ապահովված լինի փակ և պահպանվող տարածքով՝ պահակային ծառայության կողմից 24 ժամ հսկողություն իրականացվող մինչև 3 և ավելի ավտոմեքենայի համար, 5. Պետք է ունենա ավտոքարշակ 3.5 տոննա նվազագույն բեռնատարողությամբ, որը կանչը ստանալուց հետո առնվազն 30 րոպեի ընթացքում կարող է դուրս գալ տեխնիկական սպասարկման կայանից դեպի վթարված ավտոմեքենայի գտնվելու վայր:	դրամ	1700000 /որից 1200000-ը առկա ֆինանսական միջոցներով/	1	ՀՀ, ք. Երևան	Կնքվելիք պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20-րդ օրացուցային օրվանից մինչև 2021թ. դեկտեմբերի 20-ը՝ պատվիրատուի կողմից ներկայացվող պահանջի հիման վրա, այդ պահանջը ներկայացվելու օրվանից հաշված 2 աշխատանքային օրվա ընթացքում: Առանձին դեպքերում պատվիրատուի կողմից կարող են սահմանվել ծառայության մատուցման այլ ժամկետներ

*Որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, հղում պարունակելու դեպքում հասկանալ «կամ համարժեք» բառերը:

**

հ/հ	SU-1 (տեխնիկական զննման/դիագնոստիկա) SU-2 (վերանորոգման) ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Տրանսպորտային միջոցների մակնիշները (տեսակները)		
		Տոյոտա Պրադո LC 150 4.0 լ 2013թ	Տոյոտա Քեմրի 3.5լ 2013թ	Տոյոտա Քեմրի 2.5լ 2015թ-2 հատ
1	2	3	4	5
	SU-1 ներառվող ծառայությունների անվանումները	Տոյոտա Պրադո LC 150 4.0 լ 2013թ	Տոյոտա Քեմրի 3.5լ 2013թ	Տոյոտա Քեմրի 2.5լ 2013թ-1 հատ 2015թ-2 հատ
1	Բռնկման համակարգի ստուգում	1000	1000	1000
2	էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	1000	1000	1000
	SU-2 ներառվող ծառայությունների անվանումները	Տոյոտա Պրադո LC 150 4.0 լ 2013թ	Տոյոտա Քեմրի 3.5լ 2013թ	Տոյոտա Քեմրի 2.5լ 2015թ-2 հատ
	1.Շարժիչ			
3	Վառոցքի մոմի բնիկի նորոգում	3000	3000	3000
4	Շարժիչի յուղի մղիչի փոխարինում	30000	30000	30000
5	Շարժիչի յուղի մղիչի նորոգում	15000	15000	15000
6	Շարժիչի յուղի մղիչի մաքրում	15000	15000	15000
7	Շարժիչի բարձիկի փոխարինում	15000	15000	15000
	2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ			
8	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	2000	2000	2000
9	Ավտոմեքենայի յուղում (ը ն թ ա ց ա մ ա ս ա յ ի ն դ ե տ ալ ն ե ր ի)	2000	2000	2000
10	Համակարգչային ախտորոշում, թերությունների վերացմամբ	5000	5000	5000
11	Յուղի ռադիատորի փոխարինում	25000	25000	25000
12	Յուղի ռադիատորի նորոգում	8000	8000	8000
13	Վառոցքի մոմի փոխարինում 1 կ-տ	5000	5000	5000
14	Օդի զտիչի փոխարինում	2000	2000	2000
15	Վառելանյութի խողովակի հանում և տեղադրում	2000	2000	2000
16	Բռնկման կարգավորում	4000	4000	4000
17	Օդի ծախսի տվիչի փոխարինում	5000	5000	5000
	3. Սառեցման և արտածման համակարգ			
18	Ռադիատորի հանում և տեղադրում	18000	18000	18000
19	Ռադիատորի նորոգում	25000	20000	20000
20	Հովացման հեղուկի փոխարինում	4000	3000	3000
	4. Կցորդում և ՓՏ			
21	ՓՏ-ի բարձիկի փոխարինում	12000	10000	10000
22	ՓՏ-ի յուղի փոխարինում	20000	20000	20000
	5. Առջևի և հետևի կամրջակներ			
23	Կամրջակի յուղի փոխարինում	1000	1000	1000
	6. Լուսերց			

24	Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում	10000	10000	10000
25	Առջևի անվակունդի առանցքակալի փոխարինում	5000	5000	5000
26	Առջևի անվակունդի հանում և տեղադրում	8000	8000	8000
27	Հետևի անվակունդի հանում և տեղադրում	8000	8000	8000
28	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	5000	5000	5000
29	Ձախ կամ աջ հոդակապի խտաբուկերի փոխարինում	5000	5000	5000
30	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	3000	3000	3000
31	Առջևի զսպանակի փոխարինում	2500	2500	2500
32	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	8000	6000	6000
33	Հարվածամեղմիչի վռանների փոխարինում	1000	1000	1000
34	Հարվածիչի (բարձիկի փոխարինում)	4000	3000	3000
35	Գնդե հոդակապերի պատյանի փոխարինում	2500	2500	2500
36	Գնդե հոդակապերի փոխարինում	8000	8000	8000
37	կայունարարի հանում և տեղադրում	5000	5000	5000
38	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	4000	4000	4000
39	Հետևի կախոցի անվաբացքի կարգավորում	7000	7000	7000
40	Հետևի կայունարարի վռաների փոխարինում	4000	4000	4000
41	կայունարարի կալունակի փոխարինում	4000	4000	4000
42	Հետևի զսպանակների փոխարինում	4000	3000	3000
43	Հետևի ցնցամեղմիչի փոխարինում	8000	6000	6000
44	Հետևի հարվածամեղմիչի վռանների փոխարինում	1000	1000	1000
45	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում 1հատ	5000	5000	5000
	7. Ղեկային մեխանիզմ			
46	Հիդրոուժեղարարի համակարգի յուղի փոխարինում	3000	3000	3000
	8. Արգելակային համակարգ			
47	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում	5000	5000	5000
48	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում	5000	5000	5000
49	Առջևի սուպպորտի վերանորոգում	8000	8000	8000
50	Հետևի սուպպորտի վերանորոգում	8000	8000	8000
51	Արգելակային փողրակի փոխարինում	2500	2500	2500
52	արգելակային կոճղակների փոխարինում	6000	6000	6000
53	Արգելակային համակարգի օդահանում	1000	1000	1000
54	սկավառակային կոճղակների փոխարինում	6000	6000	6000
55	թմբուկային կոճղակների փոխարինում	6000	6000	6000
56	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	5000	5000	5000
57	Առջևի արգելակային սկավառակների հղկում 1 հատ	7000	7000	7000
58	Արգելակային համակարգի լվացում	2500	2500	2500
59	Արգելակային հեղուկի փոխարինում	2500	2500	2500
	9. Էլեկտրասարքավորում			
60	Ազդանշանի կարգավորում	5000	5000	5000
61	Ազդանշանի հանում և տեղադրում	3000	3000	3000
62	Առջևի լապտերի հանում և տեղադրում	1500	1500	1500
63	Հետևի լապտերի հանում և տեղադրում	1500	1500	1500
64	Առջևի լապտերների կարգավորում	2500	2500	2500
65	Վառոցքի նոճի հանում և տեղադրում	3000	3000	3000

66	Ապակելվացիչի հանում և տեղադրում	2500	2500	2500
67	Ապակելվացիչի շարժիչի հանում և տեղադրում	5000	5000	5000
68	Ապահովիչների փոխարինում	500	500	500
69	Էլեկտրական տվիչների փոխարինում	1000	1000	1000
70	Էլեկտրական անջատիչների փոխարինում	1000	1000	1000
71	Մարտկոցի կլեյմների փոխարինում	1000	1000	1000
72	Ակումլյատորի դրական էլեկտրոլարի փոխարինում	1000	1000	1000
73	Ակումլյատորի բացասական էլեկտրոլարի փոխարինում	1000	1000	1000
	10. Ավտոմեքենայի սրահ			
74	Օդորակիչի զտիչի փոխարինում	3000	3000	3000
75	Լամպի փոխարինում	1500	1500	1500
	11. Այլ ծառայություններ			
76	Եռակցման աշխատանքներ *գին 1սմ (գծ.մ) համար*	5000	5000	5000
77	Առջևի կամ հետևի անվաբացքի կարգավորում	8000	8000	8000
78	Անիվի հանում և տեղադրում	1000	1000	1000
79	Անվադողի վերանորոգում	1500	1500	1500
80	Անիվի բալանսավորում	1000	1000	1000
81	Անիվի վալց	4000	4000	4000
82	Քարշարկի ծառայություն *գին 1կմ, համար*	1500	1500	1500
83	Ավտոմեքենայի քսենոնայինբլոկի փոխարինում	2000	2000	2000
	ՏՄ-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Տոյոտա Պրադո LC 150 4.0 լ 2013թ	Տոյոտա Քեմրի 3.5լ 2013թ	Տոյոտա Քեմրի 2.5լ 2015թ-2 հատ
	1.Շարժիչ			
1	Շարժիչի Բարձիկ	65000	55000	50000
2	Բարձիկ փ/տուփի	35000	30000	35000
3	Յուղի մղիչ	42500	38500	35500
4	Յուղի ծորակ	1000	1000	1000
5	Շարժիչի յուղի արանքաչափիչ	1000	1000	1000
6	Շարժիչի յուղի արանքաչափիչի իրան	1000	1000	1000
	2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ			
7	Յուղ շարժիչի հանքային, *1 լիտր*	2500	2500	2500
8	Յուղ շարժիչի կիսասինթետիկ, *1 լիտր*	3500	3500	3500
9	Յուղ շարժիչի սինթետիկ, *1 լիտր*	5000	5000	5000
10	Յուղման համակարգի լվացման հեղուկ *1 լիտր*	2000	2000	2000
11	Յուղի զտիչ	3000	3000	3000
12	Յուղի ռադիատոր	20000	20000	20000
13	Վառոցքի կոճ	20000	20000	20000
14	Վառոցքի մոմ	8000	8000	8000
15	Բենզոմղիչ	40000	35000	30000
16	Վառելանյութի խողովակ	10000	10000	10000
17	Օդի զտիչ	8000	8000	8000
18	Օդի զտիչի փողրակ	1000	1000	1000
19	Յուղի տվիչ	10000	10000	10000
20	Օդի ծախսի տվիչ	35000	35000	35000
21	Օդորակիչի զտիչ	10000	10000	10000
	3. Սառեցման և արտածման համակարգ			
22	Ռադիատոր	60000	55000	55000
23	Սառեցման հեղուկ *1 լիտր*	3500	3500	3500
24	Չսառչող հեղուկ ապակիների համար	2500	2500	2500

25	ՓՏ-ի յուղ	12000	12000	12000
26	ՓՏ-ի բարձիկ	50000	45000	40000
	5. Կախոց			..
27	Աջ կամ ձախ հոդակապ	65000	45000	45000
28	Անվակունդ	50000	30000	30000
29	Անվակունդի խցուկ	15000	10000	10000
30	Անվակունդի ներքին առանցքակալ	12000	10000	10000
31	Անվակունդի արտաքին առանցքակալ	9000	7000	7000
32	Հետևի անվակունդի առանցքակալ	55000	50000	50000
33	Հարվածամեղմիչի թասակ	30000	25000	25000
34	Առջևի հարվածամեղմիչ	80000	50000	50000
35	Առջևի կայունարարի վռան	10000	8000	8000
36	Առջևի կայունարարի կանգնակ	15000	12000	12000
37	Հետևի ցնցամեղմիչ	40000	40000	40000
38	Հետևի մետաղաձողի (շտանգա) վռան	12000	10000	10000
	6. Ղեկային մեխանիզմ			
39	Հիդրոուժեղարարի յուղ, *1լ/հտր*	6000	6000	6000
	7. Արգելակային համակարգ			
40	Արգելակային հեղուկ	3000	3000	3000
41	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	40000	35000	35000
42	Հետևի թմբուկային կոճղակների կոմպլեկտ	25000	25000	25000
43	Առջևի արգելակային սկավառակ	35000	35000	35000
	8. Էլեկտրասարքավորում			
44	Խցիկի լապտերի լամպ	2000	2000	2000
45	Արգելակային լապտերի լամպ	2500	2500	2500
46	Առջևի թարթիչ լապտերի լամպ	3000	3000	3000
47	Հետևի թարթիչի լապտերի լամպ	3000	3000	3000
48	Հետևի լապտերի լամպ	4000	4000	4000
49	Հակամշուշային լապտերի լամպ	8000	8000	8000
50	Առջևի լապտերի լամպ	8000	8000	8000
51	էլեկտրական տվիչ	3000	3000	3000
52	Ապակեմաքրիչ	5000	5000	5000
53	Ազդանշան	20000	20000	20000
54	Քսենոնայինբլոկ	40000	40000	40000
55	Քսենոնայինլամպ	20000	20000	20000
56	Մարտկոց	40000	40000	40000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ֆինանսների նախարարություն
ք. Երևան, Մ. Ադամյան 1
ՀՎՀՀ՝ 02629081
Հ/Հ 900011018539
ՖՆ գործառնական վարչություն
ՖՆ գլխավոր քարտուղար

_____Վ. Հարությունյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

"Մ-Բի-Ռ" ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Մյասնիկյան 22/4
Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ ՓԲԸ
"Գեղարքունիք" մ/ճ
Հ/Հ 220083335012000
ՀՎՀՀ 08417829

Տնօրեն՝
_____ Վ. Բաղդասարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«23» մարտ 2021 թ. կնքված
«ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50111170/1	Ավտոմեքենայի պահպանման ծառայություններ		120000	120000	420000	420000	420000	720000	720000	720000	1200000	1200000	1200000	1200000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ֆինանսների նախարարություն
ք. Երևան, Մ. Ադամյան 1
ՀՎՀՀ՝ 02629081
Հ/Հ 900011018539
ՖՆ գործառնական վարչություն
ՖՆ գլխավոր քարտուղար

----------Վ. Հարությունյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

"Մ-Բի-Ռ" ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Մյասնիկյան 22/4
Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ ՓԲԸ
"Գեղարքունիք" մ/ճ
Հ/Հ 220083335012000
ՀՎՀՀ 08417829

Տնօրեն՝
---------- Վ. Բաղդասարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
« » 2021թ. կնքված
«ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 2021թ. կնքված
«ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն